

Համաձայնագիր

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետություն նավթամթերքի մատակարարման ոլորտում առևտրատնտեսական համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ղազախստանի
Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

դեկլարավելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014
թվականի մայիսի 29-ի պայմանագրով,

ելնելով նավթամթերքի մատակարարման ոլորտում փոխշահավետ
համագործակցության խորացման ու եվրասիական տնտեսական ինտեգրման
ուղղությամբ առաջխաղացման հարցում շահագրգռվածությունից,
համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Սույն համաձայնագրով սահմանվում են Հայաստանի Հանրապետության
կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև
առևտրատնտեսական համագործակցության պայմանները Եվրասիական
տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային
անվանացանկի 27-րդ խմբում դասակարգվող ապրանքները, բացառությամբ
նավթի, էլեկտրաէներգիայի, բնական գազի ու ածուխի (այսուհետ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ
27-րդ խմբում դասակարգվող ապրանքներ), Հայաստանի Հանրապետություն
մատակարարելու մասով:

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների
մատակարարման ոլորտում Կողմերի միջև համագործակցությունը հիմնվում է
փոխադարձ շահերի պաշտպանության վրա և չպետք է վնասի Կողմերի
պետություններից յուրաքանչյուրի շահերին:

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքները ենթակա են
Կողմերի կողմից մաքսային հայտարարագրման՝ Եվրասիական տնտեսական
միության մաքսային օրենսգրքի 43-րդ գլխին համապատասխան:

Հոդված 2

1. Գործունեության համակարգման և սույն համաձայնագրի կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով Կողմերը նշանակում են իրավասու մարմիններ.

ղազախական կողմից՝ ածխաջրածինների և ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների արտադրության բնագավառում իրավասու մարմինը.

հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը:

2. Սույն համաձայնագրի շրջանակներում ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների փոխադրման պլանավորումն ու կազմակերպումն ապահովող լիազորված կազմակերպություններն են՝

««Қазақстан Темір Жолы» ազգային ընկերություն» բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «ԿՏԺ» ԱԸ» ԲԸ).

«ԿՏԺ-բեռնափոխադրումներ» բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ բեռների ազգային փոխադրող).

«Ակտաուի միջազգային ծովային առևտրային նավահանգիստ» ազգային ընկերություն» բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ակտաու նավահանգիստ).

«Կուրիկ նավահանգիստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերակցությունը (այսուհետ՝ Կուրիկ նավահանգիստ):

3. Իրավասու մարմինների, լիազորված կազմակերպությունների կամ դրանց անվանումների փոփոխության դեպքում Կողմերը դրա մասին միմյանց ծանուցում են դիվանագիտական ուղիներով:

Հոդված 3

1. Կողմերի իրավասու մարմինները յուրաքանչյուր տարի՝ մինչև ընթացիկ օրացուցային տարվա դեկտեմբերի 1-ը (մեկը), կազմում են Հայաստանի Հանրապետության տարածքում ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների արտադրության, ներքին սպառման, մատակարարման, ներմուծման և արտահանման հաշվեկշիռը, ներառյալ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների՝ Ղազախստանի Հանրապետությունից և Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն մատակարարումների ծավալները (այսուհետ՝ ինդիկատիվ հաշվեկշիռներ):

2. Կողմերի իրավասու մարմինները ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում

դասակարգվող ապրանքների ցանկը հաստատում են միջգերատեսչական արձանագրություն կնքելու միջոցով, որը գործողության մեջ է դրվում այն ստորագրելու օրվանից, ենթակա չէ վավերացման Ղազախստանի Հանրապետության համար և ուժի մեջ մտնելու համար չի պահանջում ներպետական ընթացակարգերի կատարում՝ Կողմերի պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 4

1. Սույն համաձայնագրին համապատասխան՝ Կողմերն ստեղծում են անհրաժեշտ պայմաններ՝ Ղազախստանի Հանրապետության տարածքից Հայաստանի Հանրապետություն ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների ցանկի համաձայն ապրանքների մատակարարումները Կողմերի պետությունների տնտեսավարող սուբյեկտների (ռեզիդենտների) կողմից իրականացնելու համար՝ լիազորված կազմակերպությունների ներգրավմամբ:

2. Ցանկով հաստատված, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող, ինդիկատիվ հաշվեկշիռներով նախատեսված ծավալներով ներքին սպառման համար Ղազախստանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն մատակարարվող ապրանքների համար ղազախական կողմն արտահանման մաքսատուրքեր չի գանձում՝ ԵԱՏՄ-ի մասին պայմանագրի 28-րդ հոդվածին համապատասխան:

3. Ցանկով հաստատված, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող, ընթացիկ օրացուցային տարվա ինդիկատիվ հաշվեկշիռներով նախատեսված ծավալները գերազանցող ծավալներով ապրանքների մատակարարումը Ղազախստանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն արգելվում է:

Ցանկով չհաստատված, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող, ինչպես նաև ինդիկատիվ հաշվեկշիռներով չնախատեսված ապրանքների մատակարարումը Ղազախստանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն արգելվում է:

4. Ֆորս մաժորային իրավիճակների (Ղազախստանի Հանրապետության նավթավերամշակման գործարաններում և (կամ) Ղազախստանի Հանրապետության խողովակաշարային տրանսպորտում աշխատանքի դադարի, ընդհատման, վթարների) առաջացման դեպքում ԵԱՏՄ-ի մասին պայմանագրի 29-րդ հոդվածին համապատասխան՝ ազգային անվտանգության և ներքին շուկայի պաշտպանության ապահովման նպատակով ղազախական կողմի իրավասու մարմինը, Ղազախստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված

կարգով, իրավունք ունի սահմանելու ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների՝ Ղազախստանի Հանրապետության տարածքից Հայաստանի Հանրապետություն արտահանման ժամանակավոր սահմանափակումներ:

Ղազախստանի Հանրապետության տարածքից Հայաստանի Հանրապետություն ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների արտահանման ժամանակավոր սահմանափակումը սահմանելուց 20 օրացուցային օր առաջ ղազախական կողմի իրավասու մարմինը դիվանագիտական ուղիներով ծանուցում է, ինչպես նաև տվյալ միջոցի մասին տեղեկացնում է հայկական կողմի իրավասու մարմնին:

Հոդված 5

Ղազախական կողմի իրավասու մարմինը յուրաքանչյուր ամիս՝ մինչև պլանավորվող ամսվան նախորդող ամսվա 25-ը (քսանհինգը), նավթի մատակարարողների հայտերի և նավթամթերքի արտադրության ու սպառման ներքին հաշվեկշռի հիման վրա հաստատում է Ղազախստանի Հանրապետության նավթավերամշակման գործարաններից Հայաստանի Հանրապետություն նավթամթերքի այն ծավալով մատակարարումների պլանը, որը չի գերազանցում ինդիկատիվ հաշվեկշիռները:

Մատակարարների կողմից հայտագրված ծավալների՝ Կողմերի ինդիկատիվ հաշվեկշիռներում հաստատված ծավալների հարաբերակցությունը գերազանցելու դեպքում մատակարարումների պլանը բաշխվում է հայտերին ուղիղ համեմատական կարգով՝ Ղազախստանի Հանրապետության նավթավերամշակման գործարաններում նավթի մատակարարների վերամշակման ծավալների սահմաններում:

Հոդված 6

1. Ցանկով հաստատված, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների բեռնառաքումն իրականացվում է Ղազախստանի Հանրապետության նավթավերամշակման գործարաններից երկաթուղային կայարանների/նավահանգիստների միջոցով՝ մատակարարումների պլանում նշելով ուղարկող կայարանի (Ղազախստանի Հանրապետության նավթավերամշակման գործարանների) և նշանակման կայարանի անվանումները, բեռնառաքողի անվանումը, բեռը և բեռնման ծավալը:

2. Ցանկով հաստատված, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների փոխադրումն իրականացվում է.

- պետական սահմանի ղազախառուսական հատվածում տեղակայված երկաթուղային անցակետերով՝ ԱՊՀ մասնակից պետությունների երկաթուղային տրանսպորտի կենտրոնական խորհրդի կողմից յուրաքանչյուր տարի ընթացիկ օրացուցային տարվա համար հաստատվող՝ գնացքների կազմավորման պլանի համաձայն.

- Ղազախստանի Հանրապետության տարածքում տեղակայված Ակտաու/Կուրիկ նավահանգիստներով:

3. Ցանկով հաստատված, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27 խմբում դասակարգվող ապրանքների փոխադրումը Ղազախստանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն իրականացվում է երկաթուղային, ծովային և ավտոմոբիլային տրանսպորտի տեսակներով:

4. Կողմերի տնտեսավարող սուբյեկտների՝ փոխադրման հայտերի ընդունումն իրականացվում է լիազորված կազմակերպությունների կողմից՝ ի դեմս ղազախական կողմի բեռների ազգային փոխադրողի, ինչպես նաև Ակտաու/Կուրիկ նավահանգիստների՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների մատակարարումների պլանի հիման վրա:

Տնտեսավարող սուբյեկտների կողմից ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող՝ մատակարարումների պլանում բացակայող և (կամ) ցանկով չհաստատված ապրանքների փոխադրման հայտեր ներկայացվելու դեպքում լիազորված կազմակերպությունները տնտեսավարող սուբյեկտներից չեն ընդունում ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքները Հայաստանի Հանրապետություն փոխադրելու հայտեր:

5. Ցանկով հաստատված, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների մատակարարումների պլանի հաստատումից հետո ղազախական կողմի իրավասու մարմինը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ղազախական կողմի լիազորված կազմակերպություններ է ուղարկում սույն համաձայնագրի 5-րդ հոդվածում նշված՝ մատակարարումների ամենամսյա պլանը:

6. Ղազախական կողմի լիազորված կազմակերպությունները մատակարարումների ամենամսյա պլանի հիման վրա կազմում են ցանկով հաստատված, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների փոխադրումների պլանը՝ Ղազախստանի Հանրապետության երկաթուղային տրանսպորտի ոլորտում լիազորված մարմնի կողմից հաստատված՝ Երկաթուղային տրանսպորտով բեռների փոխադրումների կանոններին, ինչպես նաև Ղազախստանի Հանրապետության՝ առևտրային ծովագնացության բնագավառում գործող օրենսդրությանը համապատասխան:

7. «ԿՏԺ» ԱԸ» ԲԸ-ի կողմից իրենց մոտ ստացված հայտերի

համաձայնեցման մասին տեղեկատվական համակարգում հարցում ստանալու դեպքում «Հարավկովկասյան երկաթուղի» պետական ձեռնարկությունը 5 (հինգ) օրացուցային օրվանից ոչ ուշ իրականացնում է ցանկով հաստատված, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների բեռնման պլանի համաձայնեցումը: Բեռի բեռնումից հետո բեռների ազգային փոխադրողն իրականացնում է ցանկով հաստատված, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների՝ միջպետական կցվանքային կետերով ընդունումը և դրանց մատակարարումը մինչև նշանակման կայարաններ:

8. Կողմերի բեռնառաքողներին և բեռն ստացողներին արգելվում է ընթացուղում փոխադրման պայմանագրի փոփոխման հայտ ներկայացնել և իրականացնել հայտագրված նշանակման կետի (կայարանի) փոփոխություն (վերահասցեագրում):

Բեռն ստացողն իրավունք ունի ներկայացնելու փոխադրման պայմանագրի, նշանակման կետի (կայարանի) փոփոխության հայտ (վերահասցեագրում)՝ բեռը նշանակման կայարան ժամանելուց հետո և միայն նշանակման երկրի տարածքում:

9. Կողմերի բեռնառաքողները և բեռն ստացողները բեռի փոխադրումը/տեղափոխումը հաստատում են հաշիվ-ապրանքագրերով՝ Կողմերի պետությունների հարկային օրենսդրության համապատասխան, ինչպես նաև ապրանքաուղեկից և այլ փաստաթղթերով՝ ԵԱՏՄ-ի մասին պայմանագրի թիվ 18 հավելվածի համաձայն:

10. Մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը (տասնհինգը) ղազախական կողմի լիազորված կազմակերպությունները տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ ղազախական կողմի իրավասու մարմին են ներկայացնում բեռնառաքման ծավալների վերաբերյալ հաշվետվություն՝ Բեռների սակագնավիճակագրական միասնական անվանացանկի՝ բեռների անվանացանկով մատակարարումների պլանի համաձայն:

Հոդված 7

1. Ցանկով հաստատված, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող՝ Ղազախստանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն մատակարարվող ապրանքները սույն համաձայնագրին համապատասխան՝ առանց արտահանման մաքսատուրքերի գանձման, ենթակա չեն արտահանման Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ և ԵԱՏՄ երկրներ:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պարտավորությունները

Հայաստանի Հանրապետության կողմից խախտելու փաստերը ղազախական կողմից հայտնաբերվելու դեպքում Կողմերն անցկացնում են բանակցություններ և խորհրդակցություններ՝ սույն համաձայնագրի 9-րդ հոդվածին համապատասխան:

Եթե խախտում հայտնաբերելու փաստի մասին գրավոր ծանուցումը ղազախական կողմի կողմից հայկական կողմին դիվանագիտական ուղիներով ուղարկելու օրվանից 2 (երկու) օրացուցային ամսվա ընթացքում Կողմերի բանակցությունների և խորհրդակցությունների արդյունքներով ձեռք չեն բերվում փոխադարձ ընդունելի պայմանավորվածություններ, ապա ղազախական կողմն իրեն իրավունք է վերապահում արգելելու և (կամ) կասեցնելու և (կամ) կրճատելու ցանկով հաստատված, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների՝ սույն համաձայնագրով նախատեսված անմաքս մատակարարումները Հայաստանի Հանրապետություն, ինչպես նաև իրեն իրավունք է վերապահում կիրառելու միջոցառումներ՝ սույն հոդվածին համապատասխան:

Ըստ սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված խախտումների բացահայտված փաստերի՝ հայկական կողմը ղազախական կողմին վճարում է ԱՄՆ դոլարով հաշվարկված, խախտման փաստը հայտնաբերելու օրվա դրությամբ Ղազախստանի Հանրապետությունում գործող արտահանման մաքսատուրքերի ծավալին համարժեք փոխհատուցման գումարներ՝ արտահանված և վերաարտահանված ապրանքների համար:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված փոխհատուցման գումարը դրամային ձևով հայկական կողմի կողմից ենթակա է վճարման՝ հոգուտ ղազախական կողմի, արտահանման ու վերաարտահանման փաստի հայտնաբերման մասին գրավոր ծանուցումը հայկական կողմի իրավասու մարմնի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից 30 (երեսուն) օրացուցային օրվանից ոչ ուշ:

4. Սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված գումարը հայկական կողմի կողմից չվճարվելու դեպքում նշված գումարը ճանաչվում է որպես Հայաստանի Հանրապետության պետական պարտք Ղազախստանի Հանրապետությանը:

Պետական պարտքի նշված գումարին ամենօրյա կտրվածքով հաշվեգրվում են տոկոսներ՝ տոկոսների հաշվեգրման համապատասխան ժամանակահատվածի սկզբից 2 (երկու) աշխատանքային օր առաջ Ղազախստանի Հանրապետության ազգային բանկի կողմից սահմանված վերաֆինանսավորման դրույքաչափով, և հայկական կողմի կողմից վճարվում են յուրաքանչյուր եռամսյակը մեկ: Տոկոսների վերջին վճարումը կատարվում է պետական պարտքի հիմնական գումարի մարմանն ուղղված վերջին վճարման հետ միաժամանակ: Տոկոսները հաշվարկվում են՝ ելնելով 360-օրյա տարվա ընթացքում (բազան՝ 365/360) լրացած

օրերի փաստացի քանակից:

Հոդված 8

1. Հայկական կողմը մինչև ընթացիկ օրացուցային տարվա նոյեմբերի 1-ը (մեկը) ղազախական կողմին սահմանված կարգով ներկայացնում է տեղեկատվություն 9 (ինը) ամսվա կտրվածքով ինդիկատիվ հաշվեկշիռների կատարման և ընթացիկ օրացուցային տարվա ընթացքում դրանց ակնկալվող կատարման վերաբերյալ, ինչպես նաև առաջարկներ հաջորդ օրացուցային տարվա համար ինդիկատիվ հաշվեկշիռների և արձանագրության կազմման վերաբերյալ:

2. Կողմերի իրավասու մարմինները մինչև օրացուցային տարվա հունվարի 31-ը (երեսունմեկը) անցկացնում են Ղազախստանի Հանրապետության և երրորդ պետությունների հետ Հայաստանի Հանրապետության փոխադարձ առևտրի վիճակագրության և ցանկով հաստատված, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 27-րդ խմբում դասակարգվող ապրանքների արտահանման և ներմուծման վիճակագրության համեմատություն:

Հոդված 9

Սույն համաձայնագրի դրույթների կիրառման կամ մեկնաբանման, սույն համաձայնագրով ստանձնած պարտավորությունները Կողմերից մեկի կողմից կատարելու համար խոչընդոտներ ստեղծող հանգամանքների առաջացման հետ կապված վեճերն ու տարաձայնությունները կարգավորվում են Կողմերի միջև բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 10

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ սույն համաձայնագրի մեջ կարող են կատարվել փոփոխություններ, որոնք դրա անբաժանելի մասն են կազմում և ձևակերպվում են առանձին արձանագրություններով, որոնք ուժի մեջ են մտնում սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված կարգով:

Հոդված 11

1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում նրա ուժի մեջ մտնելու համար

անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին Կողմի վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով մյուս Կողմի կողմից ստանալու օրվանից 30 (երեսուն) օրացուցային օրը լրանալուց հետո:

2. Սույն համաձայնագիրը գործում է մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը (երեսունմեկը), այդ ժամկետը լրանալուն պես այն ավտոմատ կերպով երկարաձգվում է 5 (հինգ) տարով, եթե Կողմերից որևէ մեկը սույն համաձայնագրի գործողության սկզբնական ժամկետը լրանալուց առնվազն 6 (վեց) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չի ծանուցում Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:


Կատարված է Յուր-Ասյթան քաղաքում 2020 թվականի հունիսի «16»-ին, երկու բնօրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն, ղազախերեն և ռուսերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն համաձայնագրի տեքստերի միջև տարընթերցումների դեպքում Կողմերը հիմք են ընդունում ռուսերեն տեքստը:

Հայաստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝



Ղազախստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝



Соглашение
между Правительством Республики Армения и Правительством
Республики Казахстан о торгово-экономическом сотрудничестве в
области поставок нефтепродуктов в Республику Армения

Правительство Республики Армения и Правительство Республики Казахстан, именуемые в дальнейшем Сторонами,
руководствуясь Договором о Евразийском экономическом союзе от 29 мая 2014 года,
исходя из заинтересованности в углублении взаимовыгодного сотрудничества в области поставок нефтепродуктов и продвижения по пути евразийской экономической интеграции,
согласились о нижеследующем:

Статья 1

Настоящее Соглашение определяет условия торгово-экономического сотрудничества между Правительством Республики Армения и Правительством Республики Казахстан по поставке товаров, классифицируемых в группе 27 Товарной номенклатуры внешнеэкономической деятельности Евразийского экономического союза, за исключением нефти, электроэнергии, природного газа и угля (далее – товары, классифицируемые в группе 27 ТН ВЭД ЕАЭС), в Республику Армения.

Сотрудничество между Сторонами в области поставок товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС, основывается на защите взаимных интересов и не должно наносить ущерба интересам каждого из государств Сторон.

Товары, классифицируемые в группе 27 ТН ВЭД ЕАЭС, подлежат таможенному декларированию Сторонами в соответствии с главой 43 Таможенного Кодекса Евразийского экономического союза.

Статья 2

1. Для координации деятельности и контроля за исполнением настоящего Соглашения Стороны назначают компетентные органы:

от казахстанской стороны – компетентный орган в области углеводородов и производства товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС;

от армянской стороны - Министерство территориального управления и инфраструктур Республики Армения.

2. Уполномоченными организациями, обеспечивающими планирование и организацию перевозки товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС, в рамках настоящего Соглашения являются:

Акционерное общество «Национальная компания «Қазақстан Темір Жолы» (далее – АО «НК «КТЖ»);

Акционерное общество «КТЖ-Грузовые перевозки» (далее – национальный перевозчик грузов);

Акционерное общество «Национальная компания «Актауский международный морской торговый порт» (далее – порт Актау);

Товарищество с ограниченной ответственностью «Порт Курык» (далее – порт Курык).

3. В случае изменения компетентных органов, уполномоченных организаций или их наименований Стороны уведомляют об этом друг друга по дипломатическим каналам.

Статья 3

1. Компетентные органы Сторон ежегодно до 1 (первого) декабря текущего календарного года составляют баланс производства, внутреннего потребления, поставки, импорта и экспорта товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС, на территории Республики Армения, включая объемы поставок товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС, из Республики Казахстан и Российской Федерации в Республику Армения (далее – индикативные балансы).

2. Компетентные органы Сторон утверждают Перечень товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС, путем заключения межведомственного Протокола, который вводится в действие с даты его подписания, не подлежит ратификации для Республики Казахстан и не требует выполнения внутригосударственных процедур для вступления в силу, в соответствии с законодательством государств Сторон.

Статья 4

1. Стороны в соответствии с настоящим Соглашением создают необходимые условия для осуществления хозяйствующими субъектами (резидентами) государств Сторон поставок согласно Перечню товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС, с территории Республики Казахстан в Республику Армения с привлечением уполномоченных организаций.

2. В отношении товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС, утвержденных Перечнем, поставляемых из Республики Казахстан в Республику Армения для внутреннего потребления в объемах, предусмотренных индикативными балансами, казахстанская сторона не взимает вывозные таможенные пошлины в соответствии со статьей 28 Договора о ЕАЭС.

3. Поставка товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС, утвержденных Перечнем, из Республики Казахстан в Республику Армения сверх объемов, предусмотренных индикативными балансами на текущий календарный год, запрещена.

Поставка товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС, не утвержденных Перечнем, из Республики Казахстан в Республику Армения, а также не предусмотренных индикативными балансами, запрещена.

4. В случаях возникновения форс-мажора (остановки, сбоя, аварий на нефтеперерабатывающих заводах Республики Казахстан и/или трубопроводном транспорте Республики Казахстан), в целях обеспечения национальной безопасности и защиты внутреннего рынка в соответствии со статьей 29 Договора о ЕАЭС, компетентный орган казахстанской стороны в установленном законодательством Республики Казахстан порядке, вправе устанавливать временные ограничения вывоза товаров, классифицируемых

в группе 27 ТН ВЭД ЕАЭС, с территории Республики Казахстан в Республику Армения.

Компетентный орган казахстанской стороны направляет уведомление по дипломатическим каналам за 20 (двадцать) календарных дней до введения временного ограничения на вывоз товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС, с территории Республики Казахстан в Республику Армения, а также информирует компетентный орган армянской стороны о данной мере.

Статья 5

Компетентный орган казахстанской стороны ежемесячно до 25 (двадцать пятого) числа месяца, предшествующего планируемому месяцу, на основании заявок поставщиков нефти и внутреннего баланса производства и потребления нефтепродуктов утверждает план поставок нефтепродуктов с нефтеперерабатывающих заводов Республики Казахстан в Республику Армения в объемах, не превышающих индикативные балансы.

При превышении соотношения заявленных поставщиками объемов к объемам, утвержденным в индикативных балансах Сторон, план поставок распределяется прямо пропорционально заявкам в пределах объемов переработки поставщиков нефти на нефтеперерабатывающих заводах Республики Казахстан.

Статья 6

1. Отгрузка товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС, утвержденных Перечнем, осуществляется через железнодорожные станции/порты с нефтеперерабатывающих заводов Республики Казахстан, с указанием в плане поставок наименования станции отправления (нефтеперерабатывающих заводов Республики Казахстан) и назначения, наименование грузоотправителя, груза и объема погрузки.

2. Перевозка товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС, утвержденных Перечнем, осуществляется:

- через железнодорожные пункты пропуска, расположенные на казахстанско-российском участке государственной границы, согласно Плану формирования поездов, утверждаемому ежегодно Центральным советом железнодорожного транспорта государств-участников СНГ на текущий календарный год;

- через порты Актау/Курык, расположенные на территории Республики Казахстан.

3. Перевозка с Республики Казахстан в Республику Армения товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС, утвержденных перечнем, осуществляется железнодорожным, морским и автомобильными видами транспорта.

4. Прием заявок хозяйствующих субъектов Сторон на перевозку осуществляется уполномоченными организациями в лице национального перевозчика грузов казахстанской стороны, а также портов Актау и/или Курык на основании плана поставок товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС.

В случае подачи хозяйствующими субъектами заявок на перевозку товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС, отсутствующих в плане поставок и/или не утвержденных Перечнем, уполномоченные организации не принимают от хозяйствующих субъектов заявки на перевозку в Республику Армению товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС.

5. Компетентный орган казахстанской стороны после утверждения плана поставок товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС, утвержденных Перечнем, в течение одного рабочего дня направляет в уполномоченные организации казахстанской стороны ежемесячный план поставок, указанный в статье 5 настоящего Соглашения.

6. Уполномоченные организации казахстанской стороны на основе ежемесячного плана поставок формируют план перевозок товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС, утвержденных Перечнем, в соответствии с Правилами перевозок грузов железнодорожным транспортом, утвержденными уполномоченным органом в сфере железнодорожного транспорта Республики Казахстан, а также действующим законодательством Республики Казахстан в области торгового мореплавания.

7. Государственное предприятие «Южно-Кавказская железная дорога» при поступлении в информационную систему запроса от АО «НК «КТЖ» на согласование поступивших к ним заявок производит согласование плана отгрузки товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС, утвержденных Перечнем, не позднее 5 (пяти) календарных дней. После отгрузки груза, национальный перевозчик грузов осуществляет прием товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС, утвержденных Перечнем, по межгосударственным стыковым пунктам и доставку их до станций назначения.

8. Грузоотправителям и грузополучателям Сторон запрещается подавать заявку на изменение договора перевозки в пути следования и осуществлять изменение заявленного пункта/станции назначения (переадресовку).

Грузополучатель имеет право подавать заявку на изменение договора перевозки, пункта/станции назначения (переадресовка) после прибытия груза на станцию назначения и только на территории страны назначения.

9. Грузоотправители и грузополучатели Сторон подтверждают перевозку/перемещение груза посредством счет-фактур, в соответствии с налоговым законодательством государств Сторон, а также товаросопроводительных и иных документов, в соответствии с Приложением 18 Договора о ЕАЭС.

10. До 15 (пятнадцатого) числа месяца следующего за отчетным, уполномоченные организации казахстанской стороны, с использованием информационных систем представляют отчет в компетентный орган казахстанской стороны об объемах отгрузки, согласно плану поставок по номенклатурам грузов Единой тарифно-статистической номенклатуры грузов.

Статья 7

1. Товары, классифицируемые в группе 27 ТН ВЭД ЕАЭС утвержденные Перечнем, поставляемые из Республики Казахстан в Республику Армения, в соответствии с настоящим Соглашением без взимания вывозных таможенных пошлин, не подлежат вывозу в третьи страны и страны ЕАЭС с территории Республики Армения.

2. В случае выявления казахстанской стороной фактов нарушения Республикой Армения обязательств, предусмотренных пунктом 1 настоящей статьи, Стороны проводят переговоры и консультации в соответствии со статьей 9 настоящего Соглашения.

Если по итогам переговоров и консультаций Сторон не будут достигнуты взаимоприемлемые договоренности в течение 2 (двух) календарных месяцев с даты направления казахстанской стороной армянской стороне по дипломатическим каналам письменного уведомления о выявлении факта нарушения, казахстанская сторона оставляет за собой право запретить и/или приостановить и/или сократить беспошлинные поставки товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС, утвержденных Перечнем, в Республику Армения, предусмотренные настоящим Соглашением, а также оставляет за собой право применять мероприятия в соответствии с настоящей статьей.

По выявленным фактам нарушений, предусмотренных пунктом 1 настоящей статьи, армянская сторона выплачивает казахстанской стороне суммы компенсации, исчисляемые в долларах США, эквивалентные объему вывозных таможенных пошлин, действовавших в Республике Казахстан на дату обнаружения факта нарушения, в отношении вывезенных и реэкспортированных товаров.

3. Сумма компенсации, указанная в пункте 2 настоящей статьи, подлежит выплате армянской стороной в пользу казахстанской стороны в денежной форме в срок не позднее 30 (тридцати) календарных дней с даты получения компетентным органом армянской стороны по дипломатическим каналам письменного уведомления о выявлении факта вывоза и реэкспорта и требования выплаты казахстанской стороне сумм компенсации за вывезенные и реэкспортируемые товары.

4. В случае невыплаты армянской стороной суммы, предусмотренной в пункте 2 настоящей статьи, указанная сумма признается государственным долгом Республики Армения перед Республикой Казахстан.

На указанную сумму государственного долга начисляются проценты на ежедневной основе по ставке рефинансирования, установленной Национальным Банком Республики Казахстан за 2 (два) рабочих дня до даты начала соответствующего периода начисления процентов, и уплачиваются армянской стороной ежеквартально. Последняя уплата процентов производится одновременно с последним платежом в погашение

основной суммы государственного долга. Проценты рассчитываются исходя из фактического количества дней, истекших в 360-дневном году (база 365/360).

Статья 8

1. Армянская сторона до 1 (первого) ноября текущего календарного года представляет казахстанской стороне в установленном порядке информацию о выполнении индикативных балансов за 9 (девять) месяцев и об их ожидаемом выполнении за текущий календарный год, а также предложения по формированию индикативных балансов и протокола на следующий календарный год.

2. Компетентные органы Сторон до 31 (тридцать первого) января текущего календарного года проводят сопоставление статистики взаимной торговли Республики Армения с Республикой Казахстан и третьими государствами в отношении статистики об экспорте и импорте товаров, классифицируемых в группе 27 ТН ВЭД ЕАЭС, утвержденных Перечнем.

Статья 9

Споры и разногласия, связанные с применением или толкованием положений настоящего Соглашения, возникновением обстоятельств, создающих препятствия для выполнения одной из Сторон обязательств по настоящему Соглашению, решаются путем переговоров и консультаций между Сторонами.

Статья 10

В настоящее Соглашение по взаимному согласию Сторон могут вноситься изменения и дополнения, которые являются его неотъемлемой частью и оформляются отдельными протоколами, вступающими в силу в порядке, предусмотренном для вступления в силу настоящего Соглашения

Статья 11

1. Настоящее Соглашение вступает в силу по истечении 30 (тридцати) календарных дней с даты получения одной Стороны по дипломатическим каналам последнего письменного уведомления другой Стороны о выполнении внутригосударственных процедур, необходимых для его вступления в силу.

2. Настоящее Соглашение действует до 31 (тридцать первого) декабря 2024 года, по окончании этого срока оно автоматически продлевается на 5 (пять) лет, если ни одна из Сторон письменно не уведомит другую Сторону не менее чем за 6 (шесть) месяцев до истечения первоначального срока действия настоящего Соглашения о своем намерении прекратить его действие.

Совершено в городе Нур-Султан 16 июля 2020 года в двух подлинных экземплярах, каждый на армянском, казахском и русском языках, причем все тексты имеют одинаковую силу.

В случае расхождения между текстами настоящего Соглашения, Стороны обращаются к тексту на русском языке.

**За Правительство
Республики Армения**



**За Правительство
Республики Казахстан**

